

Վարդապետին հայ եկեղեցին ամենայն իրաւամբ տօնում է Փրկչի երեք աշակերտների հոգեկան այն վեհ ապրումը, որով նրանք ձեռք են բերել այն լուսաւոր գիտակցութիւնը և հաստատուն հաւատը, թէ իրենց Վարդապետը վեհ լուսաւոր մի անձնաւորութիւն է, թէ նա երկնքի և իրենց հոգու ձայնով վկայուած Աստուծոյ որդին է: Այս այն հաւատն է, որ առկայծեց նախ Պետրոսի մէջ Կեսարիայի ճանապարհին և դրանից վեց օր յետոյ յայտնուեց ահա այս վեհ տեսարանով լեռան դազաթին:

Եւ քի իսկական քրիստոնեան չի ցանկանայ այս ջերմագին օրերում գէպի լեռների բարձունքը դիմել, գէպի ջինջ ու լուսաւոր մթնոլորտը, այնտեղ տիեզերքի պայծառ գեղեցկութեան և իւր կենդանացած հոգու անհուն խորութեան մէջ դանելու իւր Աստուծուն և իւր Փրկչին, ինչպէս այս երեք աշակերտներն արին: Անշուշտ հարկաւոր չէ այդ բարձունքի վրայ տաղաւարներ շինել ընդմիջաբնակուելու համար. դա կլինէր ճգնաւորական իդէալ. այլ հարկաւոր է կազդուրած այդ Աստուածային յայտնութեամբ, ցած իջնել և աշխարհին՝ թէկուզ իրենց կեանքի գծով՝ յայտնելու թէ՛ ի՞նչպէս են դառել իրենց Աստուծուն և ի՞նչն է լինելու իրենց կեանքի նպատակը:

Մանդիկ 21 յունիս:

Մ. Խոսիկեան.

ՀԻՆԼԵԼ

Եթէ վերցնենք հրէից պատմութեան փոթորկալից շրջանը, երբ Իսրայէլը կործանում էր իւր քաղաքական, անկախ կեանքը, երբ յուսահատութեան մէջ ամուր կերպով բռնում էր ամէն մի խաբուսիկ երևոյթ, որը խոստանում էր իրեն հնութեանը հաւասար իրաւունքով արժանի գոյութիւն, այդ ժամանակ մենք տեսնում ենք Յուդայի մէջ բազմաթիւ, իրար հետ կուռղ աղանդներ: Փարիսեցիք, Սադուկեցիք և այլն. — ահա կրօնական այն մեծ կուսակցութիւնները, որոնք գոյութիւն ունէին Հրէաստանում, կուսակցութիւններ, որոնք տաք կերպով կաւում էին միմեանց դէմ:

Իւրաքանչիւր ազանդ իւր կողմից իններքուստ բաժանուում էր աւելի մանր, միմեանց հետ թշնամաբար վերաբերող ազանդների, և մի ուր և է աչքի ընկնող քարողիչ հաւաքում էր իւր չորս կողմը աշակերտներ, որոնց հետ հիմնում էր նա կրօնական (բայց յաճախ միաժամանակ) և քաղաքական դպրոց, որը կրում էր ուսուցչի անունը:

Շէմմայեանները, Աբտալեօնները, Հիլլէիեանները ևն. ևն., բուսնում էին, ինչպէս անձրեային բշտիկներ, սակայն անհետանում էին արագութեամբ, ինչպէս բշտիկները, չթողնելով ժառանգների մէջ որևէ հետք անգամ, չյատկացնելով նրան նոյն իսկ իրենց հիմնադրի անունը: Շատ անգամ նրա անունը անհետանում էր ժամանակակիցների համար. իսկ վարդապետութիւնը ապրում էր, ընդարձակուում և մեծանում էր: Տիրելով աշխարհին,—ինչպէս քրիստոնէութիւնը նուաճեց հրէութեանը,—ինչպէս Հիլլէի վարդապետութիւնը:

Վերջին վարդապետութեան մասին էլ ստորեւ խօսք կլինի: Հիլլէի Մեծը (га-закенъ), Հիլլէի հեղահամբոյրը, Հիլլէի Բարեկոնացին, որ հրէական պատմութեան մէջ խորին հետքեր է թողել, և հանդիսանում էր «ժուժկալութեան» այն գծերի արտայայտիչը, որոնք երբեմն հրէաներին վերագրւում, իւր ժամանակին այնքան քիչ էր յայտնի, որ նրա անունը մինչև անգամ Յովսէփոս Փափիոսը իւր «Հրէական հնութիւնների»-ի մէջ չի յիշատակում:

Թալմուտը և բաղմաթիւ հրաշապատումները չեն պահպանել որևէ կերպ այդ նշանաւոր մարդու ամբողջ կենսագրութիւնը, և մենք միայն նրա վարդապետութիւնը գիտէինք, որ կատարելապէս բացատրուած է Թալմուդում: Իսկ ինչ նրա կեանքի դէպքերին է վերաբերում, ստիպուած ենք հրաշապատումների տուած չնչին փաստերով բաւականանալ: Հիլլէի ծնունդը դնում են 110 թ. Ք. ճ. առաջ: Աւանդութիւններին համաձայն, որ Հիլլէին տալիս են Մովսէսին հաւասար նշանակութիւն, նա ապրել է 120 տարի: Մովսէսի կեանքի նման, սրա կեանքն էլ երեք շրջանից է բաժանւում, 40 տարուայ կեանքը հայրենիքում—Բաբելոնում, 40 տարուայ ուսումնասիրութիւնը օրէնքների երուսաղէմում և 40 տարի Իսրայէլին առաջնորդելը: Նրա մերձաւոր յաջորդների մասին ոչ մի տեղեկութիւն չկայ: Հաստատուած է միայն, մի հարուստ, Շեքրան անունով, եղբայր ունէր, որի օգնութիւնից Հիլլէի հրաժարուեց, չնայեա՞ծ որ ծանրաբեռնուած էր ընտանիքով և օրական աշխատանքով էր նրանց ապրուստը ձարում, միևնոյն ժամանակ գիշերները անցկացնելով Թորայի ուսումնասիրութեամբ: Դէպի գիտութիւններն բռնեցած Հիլլէի ջանասիրութեան մասին կազմուել է աւանդութիւն, որ նա վերջին դա-

տաստանի օրը հանդէս պիտի գայ իբրեւ յատապարտող այն բոլոր խեղճերին, որոնք հնարաւորութիւն չեն գտել երկրիս վերայ գիտութիւններ ձեռք բերելու երբ որ աղքատին հարց կարուի, թէ ինչո՞ւ նա անուսում է մնացել և վերջինս մատնանիշ կանէ իւր աղքատութիւնը, այն ժամանակ նրան կասեն. «Մի՞թէ Հիլլէլից էլ աղքատ էր»:

Միևնոյն սէրը գէպի ուսումնս պատկերացուած է հետեւեալ պատմութեան մէջ: Օրական աշխատանքով կոպէկներ վաստակելով և ծախսելով իւր և ընտանիքի վերայ միայն աշխատածի կէսը, մնացած կէսը Հիլլէլը վճարում էր մուտքի համար յայտնի կրօնուսույցներ Շէմմայի և Արտալեօնի գիշերային դասախօսութիւնները լսելու: Մի անգամ Հիլլէլը առանց օրավաստակի մնաց և իրաւունք չտուն դպրոց մտնելու: Այն ժամանակ նա շինութեան տանիքը բարձրացաւ հերդիկի միջով ամենայն ուշադրութեամբ լսում էր դասախօսութիւնը: Ձմերային մի շաբաթ երեկոյ էր, ձիւնը քուլա քուլա թափւում էր Հիլլէլի վերայ, որը չէր զգում ցուրտը, միանգամայն տարուած լինելով ուսուցիչների իմաստութեամբ: Յոգնած և քաղցած Հիլլէլը աննկատելի կերպով քնեց և շաբաթ օրը առաւօտեան տանիքի վերայ գտան նրա սառած մարմինը: «Այս մարդը,—ասացին ուսուցիչները,—արժէ, որպէսզի նրա համար շաբաթը լուծուի, «և հրամայեցին սառածին գիտակցութեան բերել:

Աշխատասէր աշակերտը շուտով ձեռք բերեց աշխարհի իմաստութիւնը և ինքը դարձաւ ուսուցիչ, որի փառք ու համբաւը տարածուեց ամբողջ Պաղեստինում: Նրա գիտութիւնների մասին թալմուտը իւր զօրեղ ոճով այսպէս է արտայայտւում. «Իմաստութեան ոչ մի խօսքը նա չթողեց առանց ուսումնասիրելու. նա գիտէր բոլոր լեզուները, նա հասկանում էր լեռների բլուրների և ձորերի խօսակցութիւնը, խոտերի և ծառերի լեզուն, վայրենի և ընտանի կենդանիների խօսակցութիւնը. դեբրի լեզուն. նա գիտէր բոլոր իմաստունների նշանաբանները» ևն:

Հետախուզողները ենթադրում են, որ Աստիպոսի խռովութեան ժամանակները Հիլլէլը վերադարձաւ իւր հայրենիքը Բաբելոն և կրկին անգամ հանդէս եկաւ Պաղեստինում առաջին տարիները Հերովդէսի թագաւորութեան, որ կոտորել էր մեծ Սինեդրիոնի բոլոր անդամներին, ստորացրել էր Սաղգուկեցւոց աղանականներին քահանայապետ կարգելով ինչ որ այսպէս Բանանայելի: Գուցէ, փարիսեցիները իրենց սեպհական դրութիւնը ամրացնելու համար այդ բոպէն յարմար համարեցին, և այդ նպատակով էլ հրաւիրուեց հանգուցեալ յայտնի կրօնուսույց Շէմմայի և Արտալիօնի ամենահեղինակաւոր աշակերտը: Հիլլէլը դարձաւ

Սինեդրիօնի նախագահ, և այդ ժամանակուանից սկսում է նրա յեղափոխական գործունէութիւնը: Այդ ժամանակ նա 80 տարեկան էր, և ինչպէս հաստատում է աւանդութիւնը, ուսուցչի համբաւն այնպէս հեռուն տարածուեց, որ ամէն կողմից նրա մօտ աշակերտներ էին գալիս, որոնց օրինակ, Արարբանէլը հաշուում է մինչև 1000 մարդ:

Հիլէլը Մովսէսի օրէնքները բացատրելու ժամանակ ձեռնադրում էր կենսական հարցերի մէջ պարզ ձև տալ, թիթեացնել կամ մեղմացնել նրա պահանջների խստութիւնը. ձգտում էր դադարարը երկրիս վերայ հաստատել, հասկանալով, որ այն անհասանելի դիրքը, որը նա հրէից կրօնի մէջ ունէր, նրան դարձնում է անմարմին. մեռեալ և կամ ծայրահեղ դէպքում, հասցնում է մտքի վերայ տարած տառի յաղթանակին, ինչպէս Սադուկեցիների մօտ: Համոզմունքներով փարիսեցի, սադուկեցիներից ոչ պակաս Հիլէլը ընդունում էր, որ Թորան Աստուածային օրէնք է, և հետեալէս, մարդ իշխանութիւն չունի նրա մի որ և է տառը փոխելու: Սակայն նա այն էլ էր հասկանում, որ հին օրէնքը դուռել էր նահապետական կրթութեամբ և կեանքի ոչ բարդ պայմանների մէջ գտնուող երկրագործ ժողովրդի, հետեալէս, քաղաքակրթութեան պատմութեան պայմանների նկատմամբ, տնտեսական և քաղաքական փոխուած հանգամանքների մէջ նա հանդիսանում է ճնշիչ, և գուցէ փաստակար: Եւ անա տառի օրէնքը սուօրեայ կեանքի պահանջների հետ հաշտեցնելու համար Հիլէլը ձեռք է բերում մի կեղծ հնարք, օրէնքի զանցանկը, որով իրականօրէն օրէնքը վերացւում էր մէջ տեղից, թէև նրա գործողութիւնները չէր փոխում:

Այսպիսի կեղծիքների օրինակ կարող է լինել այսպէս կոչուած «պրօքրօլա»-յի ինստիտուտը: Մովսէսի օրէնքով եօթերորդ «յօրելնական» տարին ամբողջ երկրի մէջ բոլոր պարտքերը բաշխւում էր, և պարտքատէրերը իրաւունք չունէին իրենցից փոխարինարար վերցրած գումարները յետ պահանջելու: Իւր դադարարով մարդասէր օրէնքը, փողի տնտեսութիւնը չիմացող բարեգործ «Շեմիտի» այս օրէնքը վերջերը խիստ կերպով փասեց յատկապէս աղքատներին, որոնց նա պէտք է պաշտպանէր: ոչ ոք աղքատներին փոխարինարար գումար տալ չէր կամենում երկիւղ կրելով յօրելնական տարուց: Այն ժամանակ Հիլէլը վճռեց կոռել օրէնքի փաստակար գործունէութեան դէմ «պրօքրօլա»-յի օգնութեամբ, որով պարտապանը իւր փոխարինարար վերցրած գումարը ապահովում էր անշարժ կալքով: Այս ապահովութիւնը բոլորովին կեղծ էր, որովհետեւ բաւական էր մի կտոր հող ձեռք բերել, որի վերայ կարողանար կաղամբ բուսնէր, իսկ

եթէ պարտապանը հող չունէր, պարտատէրը կարող էր նրան նախօրօք «ընծայիլ» նոյնպիսի կտոր հող և դրել «պրօզրօլ»ը:

Այսպիսի կեղծիքներ Հիլլէլը մի քանի հատ է կատարել ու հաստատել, և դրանք բոլորը մի նպատակ ունէին—օրէնքի ծանրութիւնը թեթևացնել հրէաների համար:

Բայց և ինչքան նշանաւոր էր «գործնական» ուղղութիւնը, որը Հիլլէլը օրէնքի բացատրութեանը տալիս էր, այնուամենայնիւ իւր փառքով նրան չէ պարտական: Այն փառքը, որ շրջապատել է նրա անունը հրէաների յիշողութեան մէջ, նրա բարոյական վարդապետութեամբ է ստեղծուել: Այստեղ ամենից առաջ ուշադրութիւն պիտի դարձնել Հիլլէլի սխառեմի կենդրոնական կէտի վերայ. մարդու պարտականութիւնները դէպի իւր մերձաւորը աւելի բարձր են և առաջին տեղն են բռնում, քան դէպի Աստուած ունեցած պարտականութիւնները: Ապա պէտք է նկատել օրէնքի «պողաբերութեանը» պարզ ձև տալը, նրան յարմարեցնելը ոչ միայն ընտրեալ հերոսներին, այլ և պարզամիտ մարդկանց: Ինքը Հիլլէլը, լինելով օրինակ անձնուրացութեան և բարձր այլապաշտութեան, ուրիշներից պահանջում էր անհամեմատ քիչ բան: Աւանդութիւնն ասում է, մի հեթանոս, կամենալով հրէութիւն ընդունել, Հիլլէլից պահանջեց հրէական վարդապետութեան էութիւնը բացատրել այն ժամանակ, «քանի որ նա կանգնած է մի ոտի վերայ»:

—Ինչ որ քեզ հաճելի չէ, մի անիր ուրիշներին,—պատասխանեց Հիլլէլը.—անա Թորայի ամբողջ էութիւնը, մնացածը միայն բացատրութիւն է, գնահ և սովորիր:

Դրական ձևով միևնոյն օրէնքն է սուրբ գրքում—«սիրիր քո ընկերոջդ, ինչպէս քո անձը»—որ լոկ մի անհասանելի գաղափար է, Հիլլէլի բացառական ձևով հասանելի էր դառնում իւրաքանչիւր մէկի համար: Նա մտաւ և աւետարանի մէջ. «Այն բոլորը, ինչ որ դուք կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, արէք և դուք նրանց»: (Մատթ. է. 12. Ղուկ. 2. 31):

Բէալականութեան հետեող Հիլլէլը Հեսեների վանականութեան հետ էլ չյաշտուեց, միշտ բողոքում էր ճգնաւորութեան դէմ, անապատ քաշուել անձնական կատարելագործութեան համար աշխարհային չարիքի հեռացման դէմ:... «Սիրիր խաղաղութիւն և հաստատիր այն ամենայն տեղ,—սովորեցնում էր նա իրեն հետևողներին,—սիրիր Աստուծոյ ստեղծած մարդկանց և մօտեցրու նրանց Աստուծոյ օրէնքին»:

Միևնոյնն են արտայայտում նրա միւս ասացուածները, որոնք լի են խորին իմաստով. «Եթէ ես չեմ ինձ համար, ով է

ինձ համար բայց եթէ ես միայն ինձ համար եմ, այն ժամանակ — ի՞նչ եմ ես»

Կամ, «Մի հեռանար աշխարհից և մի հաւատար քեզ մինչև քո մահը, և մի դատիր քո մերձաւորին, մինչև չլինիս նրա տեղը»:

Երբեմն Հիլէլի դէպի աշխարհն ունեցած ձգտումն այնքան հեռու էր գնում, ժամանակին յարմար բնաւորութիւն էր կրում և սպառնում էր անհատականութեանը ճնշմամբ: Օրինակ, նրա սովորական օրէնքներից մէկն ասում է. «Մի երևար մերկ նրանց մօտ, որոնք զգեստ ունեն հագներին, և զգեստով՝ մերկերի մէջ: Մի կանգնիր նստածների մէջ և մի նստիր կանգնածների մէջ. մի երևար լաց եղող ծիծաղողների մէջ և ծիծաղող լաց եղողների մէջ, որովհետև ասուած է՝ ամէն բան իւր ժամանակն ունի... կայ ժամանակ ծիծաղելու, և կայ ժամանակ լաց լինելու»:

Հնլէլի բարոյական վարդապետութիւնը արտայայտուած է ոչ միայն նրա ասածների մէջ այլ և նրա այն պատմութիւնների մէջ, որոնք վերաբերում են կեանքից բոլորովին զրկուելուն, նրա դէպի ուրիշի հաւատն ունեցած անօրինակ համբերատարութեան. դէպի կրօնամոլութիւնն ունեցած դարշանքին, դէպի մերձաւորն ունեցած անսահման հեղութեանն ու սիրուն:

Աւանդութիւնն ասում է, որ Հիլէլը օգնելով աղքատին, իրեն պարտական էր համարում ոչ առաջ այն ինչ որ նրա ապրելու համար հարկաւոր էր. այլ և այն կենսական յարմարութիւններն ստեղծել, որոնց նա սովորել էր: Օրինակ, մի աղքատութեան մէջ ընկած հարստի համար ձի առաւ և որովհետև հնարաւորութիւն չուներ ծառայ վարձելու, ինքն էր նրան ծառայում:

Մի մարդ գրագ եկաւ, որ Հիլէլին համբերութիւնից կհանի և աշխատում էր յիմար հարցերով նրան բարկացնել: Նրա բոլոր ջանքերն ի դուր անցան, այդ ժամանակ յաղթուածը ցանկացաւ, որ այդ տեսակ մարդկանց թիւը պակաս լինի, որովհետև Հիլէլի պատճառով նա կորցրեց 400 զուգ — «Սրանից յետոյ, որդեակ, զգոյ՛ջ եղիր, — բարեհոգութեամբ խորհուրդ տուեց նրան Հիլէլը, — յամենայն դէպս, աւելի լաւ է որ դու 400 կորցնէիր, քան ես իմ համբերութիւնը»:

Իւր գործնական ուղղութեանը հաւատարիմ մնալով, Հիլէլը գրուած օրէնքի հետ ընդունում էր նաև բերանացի աւանդութիւնը, որ մերժում էին նրա հակառակորդները: Երբ մի անգամ, մի հեթանոս ցանկանալով հրէութեան մէջ մտնել յայտնեց Հիլէլին, որ նա միայն գրութեանն է հաւատում և խնդրեց իրեն սովորեցնի վերջինս, ասացի դուրս չարաւ աշակերտին, ինչպէս այդ խիստ Շէմմայն էր անում, այլ առաջին դասը այրուրենից

սկսեց: Երկրորդ դասին Հիլէլը սկսեց նոյն տառերն ասել մէկը միւսի անունով:

— Զէ՞ որ այդ ուղիղ չէ—ասաց աշակերտը:

— Ո՞րտեղից ես իմանում, որ ուղիղ չէ,—հարցրեց սրամիտ Հիլէլը. «Ուրմն դու հաւատում էիր իմ բերանացի բացատրութեանը: Իսկ եթէ դու հաւատում ես առանձին տառերի բացատրութեանը, այն ժամանակ դու պարտական ես հաւատալ նաև օրէնքի բերանացի բացատրութեանը»:

Հիլէլը վախճանուեց քրիստոնէական դարի 10-րդ տարին, որի մահը դառնապէս ողբացին հրէաները, և որը խորին հէտք թողեց հին պատմութեան և գրագիտութեան մէջ: «Այլևս չկայ համեստը, այլևս չկայ ազնիւը, այլևս չկայ էղբայի արժանաւոր աշակերտը», յիշում է իւր ուսուցչին Սօտա-ն, որ ժողովրդի վիճակը թեթևացրեց, հոգս քաշելով յատկապէս աղքատների համար և ձգտելով Աստուծոյ թաղաւորութիւնը հաստատել ոչ թէ երկնքում, այլ երկրիս վերայ կենդանութեան ժամանակ:

Ռուս. քարզմ. Արսակ վարդապետ.

Ն Ո Ր Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ը *)

Պատուր Ե. Բարսի

Այն վէճը, թէ ո՞ր էտիկան համապատասխանում է իսկական բարոյականին—արդեօք կրօնականը թէ արտաքոյ կրօնի էտիկան, կամ ուրիշ խօսքով՝ արդեօք հնարաւոր է բարոյականի գոյութիւնը առանց կրօնասիրութեան, թէ բարոյականի արմատը հարկաւորապէս կրօնն է,—այս վէճը լոկ միայն բառերի բանակռիւ կը լինի, մինչև որ կանխաւ մօտաւորապէս չորոշուի, թէ ի՞նչ ենք հասկանում «կրօն» գաղափարով: Մօտաւորապէս—ըստ որում արդի ժամանակում հազիւ թէ հնարաւոր լինի այնպիսի սահման տալ կրօնին, որ ժամանակակիցներից իւրաքանչիւրին այն ընդունելի լինի: Ոմանց համար սահմանը խիստ լայն կը լինի, ոմանց համար՝ խիստ նեղ: Էլի աւելի լաւ է, որ սահմանը որչափ կարելի է լայն գծուի, որպէս զի գաղափարը ընդհանրագոյն ծաւալ ստանայ, բայց ի հարկէ այն էական նշանով, թէ «կրօնը» այնքան որոշ, անկախ, «ինքնուրոյն»

*) «Вѣстникъ Знаній» № 4.